ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 797 - Ա

«Հ. ՀՈՎՆԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ»
ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Էդիլ Հովնանյանի միջոցներով «Հ.Հովնանյան ընտանեկան հիմնադրամ մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանմանը պատկանող առանձնատունը կահավորելու և բարեգործական մշակութային կենտրոն վերակազմավորելու համար, որպես օժանդակություն «Հ.Հովնանյան ընտանեկան հիմնադրամ մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժան-ման հասցեով ուղարկված բեռի (158 տեղ, 6,096.281 կգ ընդհանուր քաշով, 47,555.00 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են՝ 9,956.67 ԱՄՆ-ի դոլար ու 487,788 դրամ, ցանկը՝ համաձայն հավելվածի, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Հ.Հովնանյան ընտանեկան հիմնադրամ մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանմանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը

բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

08.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ